ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
"MKHITAR SEBASTATSI" EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064,Երևան.Ա.Բաբաջանյան 25 հեռ:74 11 12. 091 43 10 99. info@mskh.am www.mskh.am
25 A. Babadjanyan str., Yerevan, tel: (374 10) 74 11 12, (374 91) 43 10 99

13-06-301 25.06.2013թ.

ԼՂՀ ԿԳՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան.

Շնորհակալություն ավանդական դարձող մեր համատեղ «Ասպետ» ռազմամարզական ճամբարի համար: Այն փաստը, որ Արցախի իշխանությունը գումարներ է հատկացրել ճամբարի հիգիենիկ պայմանները լավացնելու համար, խոսում է ճամբարի նշանակության և մեր համագործակցության կարևորության մասին: Շնորհակալ ենք: Սկսել ենք պատրաստվել «Ասպետին: Կրթահամալիրի կողմից ճամբարը կղեկավարի Ավագ դպրոց-վարժարանի ղեկավար Գևորգ Հակոբյանը: Մենք ՀՀ պաշտպանության նախարարին դիմել ենք տրանսպորտային փոխադրումը կազմակերպելու խնդրանքով, ինչպես անցյալ տարի:

Ձեր համաձայնությամբ կրթահամալիրի Ավագ դպրոց-վարժարանի, Գեղարվեստի, Արհեստագործական ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների 60 պատանիները Արցախի «Ասպետ» ռազմամարզական ճամբարում կլինեն 2013թ. հուլիսի 26-ից օգոստոսի 4-ը` ինչպես իմացանք Արցախի Մարտունու շրջանի իրենց հասակակիցների հետ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԼԵՅԱՆ